

ԱՆԿՈՒՄՆ

ՀԱՅՆԷՐԳ

Արծիւեանի

Մթթէ, արդարեւ անկաւ բընուծիւն,
Վարակեց և՛ նա՛ մեր արատներով...
Ահա մարդկանց պէս, կենդանի բոյսեր
Կեղծում, ստում են—և այն պարզ կերպով:

Ո՛չ, էլ չեմ ուզում երբեք հաւատալ
Համեստ շուշանի ես անմեղութեան,
Վերջին ժամանակ թիթեռը գաղտուկ
Անչափ յաճախ էր այցելում նրան:

Կասկածելի է և՛ մանուշակը
Իւր չքնաղ տեսքով, իւր անուշ հոտով,
Ս՛, անշուշտ և՛ այդ փոքրիկ ծաղիկը
Մեզ պէս տանջում է փառքի ծարաւով:

Ձը կայ այլ ևս անկեղծ զգացմունք
Վառւած սոխակի գողարիկ երգերում,
Նրա այդ ճարտար կըլկըլոցի մէջ
Միայն կեղծ լացի ես ձայն եմ լսում:

Ճշմարտութիւնը կորել է տնհետ,
Ձի մնացել նշոյլ հաւատարմութեան...
Ահա շնիկըս էլ՝ պոչն է խաղացնում,
Բայց դա նշան չէ էլ մտերմութեան:

Մօսկւա. Հոկտեմբերի 4-ին, 1889 թ.